Լուսանկարները՝ Անի Հովհաննիսյանի | UN Women Armenia

ԿԱՆԱՆՑ ԴԵՐԸ ԽԱՂԱՂԱՇԻՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ

Կանանց մասնակցությունը խաղաղաշինական գործընթացներին նպաստում է ավելի համապարփակ և կայուն խաղաղության պայմանագրերի հաստատմանը:

Հետազոտությունները ցույց են տալիս, որ բանակցություններում կանանց ներգրավվածությունը 35%-ով մեծացնում է հավանականությունը, որ խաղաղության պայմանագրերը կպահպանվեն առնվազն 15 տարի: [1]

Հետհակամարտական վերականգնում

Կանայք կարևոր դերակատարներ են հակամարտություններից հետո սոցիալական համախմբվածության վերականգնման և հակամարտությունների հիմնարար պատճառների հասցեագրման գործում:[2] Նրանց ներգրավվածությունն ապահովում է, որ խաղաղության համաձայնագրերը բավարարեն հասարակության բոլոր շերտերի, այդ թվում՝ խոցելի խմբերի կարիքները: Հայաստանում, հատկապես 2020թ. Լեռնային Ղարաբաղի պատերազմից հետո, կանայք կարևոր դեր խաղացին հետհակամարտական վերականգնման գործում՝ օգնելով վերականգնել սոցիալական համախմբվածությունը և հասցեագրել հակամարտության հիմքում ընկած պատճառները՝ նպաստելով կայուն խաղաղության գործընթացին:[3]

Խոչընդոտներ, որոնց կանայք բախվում են խաղաղության հաստատման գործընթացներում

Մշակութային նորմեր

Հասարակության ակնկալիքներն ու գենդերային նորմերը հաճախ խոչընդոտում են խաղաղաշինության և հակամարտությունների կարգավորման գործընթացներին կանանց մասնակցությանը, հատկապես հայրիշխանական հասարակություններում, որտեղ կանայք թերներկայացված են պաշտոնական քաղաքականության մեջ: [4]

Հայաստանում, հատկապես գյուղական և պահպանողական շրջաններում, արմատավորված գենդերային նորմերն ու հայրիշխանական կառուցվածքները սահմանափակում են կանանց մուտքը որոշումների կայացման գործընթացներ՝ նվազեցնելով նրանց մասնակցությունը խաղաղության հաստատման պրոցեսին:[5]

Անբավարար ներկայացվածություն

Չնայած միջազգային մանդատներին, ինչպիսիք են UNSCR 1325-ը, կանայք շարունակում են թերներկայացված լինել խաղաղության բանակցություններում և խաղաղապահական գործողություններում: 2020թ. կանայք կազմել են բանակցողների միայն 13%-ը և խաղաղության համաձայնագրեր ստորագրողների 6%-ը:[6]

Հայաստանում կանանց ներդրումը խաղաղության բանակցություններում և հետհակամարտական վերականգնման գործում հաճախ անտեսվում է, քանի որ ղեկավար դիրքերում կանայք քիչ են:[7]

Գենդերային հիմքով բռնություն

Հակամարտությունների ժամանակ կանայք և աղջիկներն անհամեմատ ավելի խոցելի են սեռական բռնության և շահագործման տեսանկյունից, ինչն առավել

անհրաժեշտ է դարձնում նրանց մասնակցությունը խաղաղության գործընթացներին: Այդ փորձառությունը ձևավորում է խաղաղության և վերականգնման մասին նրանց պատկերացումները, և նրանց կարիքները խաղաղության պայմանագրերում ներառելու հնարավորություն ստեղծում:[8]

Հայաստանում գենդերային բռնության բացասական ազդեցությունը հակամարտությունների ժամանակ հատկապես մեծ է, քանի որ վերապրածները բախվում են լուրջ խոչընդոտների՝ արդարության և աջակցության փնտրտուքներում, ինչը հետագայում էլ ավելի է սահմանափակում նրանց ներգրավվածությունը խաղաղաշինական ջանքերում:[9]

Առաջարկներ տեղական իշխանություններին

Խաղաղության քաղաքականություններում գենդերազգայուն մոտեցումների ինտեգրում:

Խաղաղության ազգային քաղաքականություններում ապահովել գենդերազգայուն շրջանակների ներառումը՝ կանանց մասնակցությունը խաղաղության հաստատման գործընթացներին խրախուսելու համար:

Խաղաղության ազգային քաղաքականություններում ներառել գենդերազգայուն մոտեցումներ՝ հասցեագրելով բռնությունը վերապրածների, տեղահանված կանանց և այլ խոցելի խմբերի կարիքները:

Ապահովել UNSCR 1325-ի 2022-2024թթ. ազգային գործողությունների պլանի արդյունավետ իրականացումը և վերահսկումը՝ շեշտը դնելով խաղաղաշինական գործընթացներին կանանց մասնակցության ամրապնդման վրա:

Խթանել կանանց մասնակցությունը քաղաքականությանը:

Աջակցել բարեփոխումներին՝ վերացնելու քաղաքականությանը կանանց մասնակցության խոչընդոտները, ինչպիսիք են խտրական օրենքները, գենդերային բռնությունը և մշակութային նախապաշարմունքները:

Ներդնել քաղաքականություններ, որոնք կխրախուսեն կանանց քաղաքացիական և քաղաքական ներգրավվածությունը՝ վերացնելով սոցիալական և իրավական խոչընդոտները:

Կանանց համար ապահովել անհրաժեշտ դասընթացներ և ռեսուրսներ՝ խաղաղ բանակցություններին և հետհակամարտական կառավարմանը մասնակցելու նպատակով:

Ապահովել կանանց և աղջիկների անվտանգությունն ու պաշտպանությունը հակամարտության գոտիներում:

Առաջնահերթություն տալ կանանց և աղջիկների անվտանգության մտահոգություններին, հատկապես հակամարտության գոտիներում կամ տեղահանման պայմաններում՝ ապահովելով անվտանգ կացարաններ և ճամբարներ:

Կանանց իրավունքներով զբաղվող կազմակերպությունների հետ մշակել ընթացակարգեր՝ ապահովելու գենդերային բռնության դեպքերի հաղորդման հստակ մեխանիզմներ:

Առաջարկներ կանանց իրավունքներով զբաղվող կազմակերպություններին

- **Խթանել կանանց ներկայացվածության մեծացմանը խաղաղության գործընթացներում:**

  Շարունակել իրականացնել շահերի պաշտպանություն՝ խաղաղության բանակցություններում կանանց ներգրավվածությունը մեծացնելու և նրանց դերը խաղաղության պայմանագրերում ճանաչելի դարձնելու համար:

  Լոբբինգ անել, որ կանայք ներգրավվեն այնպիսի առանցքային դերերում, ինչպիսիք են բանակցողները, միջնորդները և խորհրդատուները, հատկապես Լեռնային Ղարաբաղի հակամարտության հետ կապված գործընթացներում:

- **Զարգացնել խաղաղաշինության գործընթացներում ներգրավված կանանց կարողությունները:**

  Ապահովել դասընթացներ, որոնք կզարգացնեն կանանց խաղաղաշինական հմտությունները. բանակցությունների վարում, միջնորդություն և հակամարտությունների կարգավորում:

  Ապահովել առաջնորդության և հակամարտությունների կարգավորման վերաբերյալ դասընթացներ երիտասարդ կանանց և խոցելի համայնքների ներկայացուցիչների համար՝ նրանց հնարավորություն տալով առաջնորդել խաղաղաշինական ջանքերը:

- **Հասցեագրել կանանց կարիքները հետհակամարտական վերականգնման փուլում:**

  Կենտրոնական դեր խաղալ կանանց կարիքների հասցեագրման հարցում՝ ներառյալ առողջապահական ծառայությունների ապահովումը, կանանց տնտեսական հզորացումը և հոգեբանական աջակցությունը:

Ստեղծել շարժական առողջապահական կենտրոններ և միկրոֆինանսավորման հնարավորություններ, իրականացնել մասնագիտական վերապատրաստման ծրագրեր՝ կանանց տնտեսական հզորացման համար:

Խթանել սերունդների միջև երկխոսությունը խաղաղաշինության մասին:

Խրախուսել երիտասարդ և ավագ սերնդի ներկայացուցիչ կանանց միջև երկխոսությունը՝ խաղաղաշինության վերաբերյալ փորձի և գիտելիքների փոխանակման նպատակով:

Կազմակերպել համայնքային հանդիպումներ, որտեղ տարբեր սերնդի ներկայացուցիչ կանայք կարող են քննարկել խաղաղաշինական ռազմավարություններ և առաջարկել հակամարտությունների կարգավորման գաղափարներ:

Առաջարկներ քաղաքացիական հասարակության կազմակերպություններին

Խթանել խաղաղաշինությանն ուղղված ջանքերը տեղական մակարդակում:

Ստեղծել խաղաղության մասին երկխոսության և քննարկումների տեղական հարթակներ, որտեղ լսելի կլինի կանանց ձայնը:

Աջակցել կանանց իրավունքներով զբաղվող տեղական և համայնքային կազմակերպություններին՝ ներգրավվելու ազգային և միջազգային խաղաղաշինական ջանքերում:

Ամրապնդել իրավական ռեսուրսների հասանելիությունը կանանց համար:

Տեղական իշխանությունների հետ աշխատելով՝ ամրապնդել կանանց իրավունքները պաշտպանող իրավական շրջանակները և արդարադատության հասանելիությունը հետհակամարտական պայմաններում:

Աջակցել գենդերազգայուն մեդիա արշավներին:

Մեկնարկել մեդիա արշավներ, որոնք կընդգծեն կանանց դերը խաղաղաշինության գործում և կբարձրացնեն հետհակամարտական վերականգնման փուլում գենդերային բռնության վերաբերյալ հասարակության իրազեկվածությունը:

Համագործակցել տեղական լրատվամիջոցների հետ՝ խաղաղաշինական գործընթացում կանանց դերը ճանաչելի դարձնելու նպատակով, ինչն էլ կնպաստի գենդերային կարծրատիպերի և մշակութային խոչընդոտների վերացմանը:

Ծանոթագրություններ

1. United Nations Women. (2014). The contribution of UN Women to increasing women's leadership and participation in peace and security and in humanitarian response. Retrieved from https://gate.unwomen.org/EvaluationDocument/Download?evaluationDocumentID=3674
2. United Nations Security Council. (2000). Resolution 1325 (S/RES/1325). Retrieved from https://undocs.org/S/res/1325%282000%29
3. Heinrich Böll Stiftung. (2022, December 18). Armenia's peace and security: Women's participation and feminist perspectives. Retrieved from https://ge.boell.org/en/2022/12/18/armenias-peace-and-security-womens-participation-and-feminist-perspectives
4. United Nations Women. (2014). Women's participation in peacebuilding. Retrieved from https://wps.unwomen.org/participation/
5. European Union Neighbourhood East. (2024, April). Armenia country gender profile. EU4GenderHelpDesk. https://euneighbourseast.eu/wp-content/uploads/2024/04/eu4genderhelpdesk_armenia_countrygenderprofile_2024-cgp_v3__compressed.pdf
6. United Nations Women. (2020). Facts and figures: Women, peace, and security. Retrieved from https://www.unwomen.org/en/what-we-do/peace-and-security/facts-and-figures
7. European Union Neighbourhood East. (2024, April). Armenia country gender profile. EU4GenderHelpDesk. https://euneighbourseast.eu/wp-content/uploads/2024/04/eu4genderhelpdesk_armenia_countrygenderprofile_2024-cgp_v3__compressed.pdf
8. United Nations Women. (2012). Women's participation in peace negotiations: Connections between presence and influence. Retrieved from https://www.unwomen.org/sites/default/files/Headquarters/Attachments/Sections/Library/Publications/2012/10/WPSsourcebook-03A-WomenPeaceNegotiations-en.pdf
9. United Nations Population Fund. (2024). We Are Here: A Qualitative Rapid Assessment of Gender-Based Violence among Refugees in Armenia. Retrieved from https://armenia.unfpa.org/en/publications/we-are-here-qualitative-rapid-assessment-gender-based-violence-among-refugees-armenia

Այս հրապարակման մեջ արտահայտված տեսակետները պատկանում են հեղինակներին և պարտադիր չէ, որ ներկայացնեն ՄԱԿ-ի Կանանց հարցերով կազմակերպության, Շվեդիայի և Նորվեգիայի կառավարությունների կամ նրանց հետ փոխկապակցված կազմակերպությունների տեսակետները: Հրապարակումը իրականացվել է Շվեդիայի և Նորվեգիայի կառավարությունների ֆինանսական աջակցությամբ: